ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--դեկտեմբերի 2021 թվականի №--Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի №24Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46-րդ կետը և հաշվի առնելով «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի №139/21 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 13-ի «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №24Ա՝
   1) որոշման մեջ «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 27-ը» բառերը փոխարինել «մինչև 2021 թվականի դեկտեմբերի 11-ը» բառերով, իսկ «մինչև 2046 թվականի դեկտեմբերի 11-ը» բառերը՝ «մինչև 2046 թվականի դեկտեմբերի 11-ը» բառերով.
   2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի՝ «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0636 լիցենզիայի պայմանների՝

ա. 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 254,0 ՄՎտ է (անվանական հզորությունը՝ 277,5 ՄՎտ ԱյԷսՕ (ISO) պայմաններում), կայանի էլեկտրական էներգիայի արտադրության գործունեության իրականացման համար անհրաժեշտ ագրեգատները (սարքավորումները) ամրագրված են սույն լիցենզիայի պայմանների №2 հավելվածում:».

բ. №2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2019 թվականի օգոստոսի 22-ի №O.AB.100.12CIB.PIED.0.8908.19 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած 635 000 000 (վեց հարյուր երեսունհինգ միլիոն) դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի դեկտեմբերի 11-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
դեկտեմբերի 2021թ.